



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրառման և տուրածի կողմէց ցույց ցունելած ձևով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ կողմէց ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԽԱՐԴԱՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

Պրեխառելիք բար եւլուերի, միացէ՛

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՎԱԿԱՆ



# ԶԵԿՈՒՑՈՒՄ


ՀԱՅԱՑ ԼԵԶՈՒՔ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ

ՈԵՖՈՐՄԻ ՄԱՍԻՆ

ԷջՄիԱՇԻՆ

Գիտական Խոսկուսակ ճպարտն

1921



Հրատարակելով ընկ. Մ. Արեգեանի թեղիաները,  
հայոց լեզուի ուղղագրութեան ռեֆորմի մասին Լուսա-  
ւորութեան Փողովրդական Կոմիսարիատը նպատակ չու-  
նի կանխել ռեֆորմի կոնկրետ բովանդակութիւնը: Կոմի-  
սարիատի ցանկութիւնն է միայն հրապարակական բըն-  
նաւթեան նիւթ դորձնել զեկուցողի դիտողութիւններն  
ու առաջարկները:

Լուսաւորական նպատակի և կիրարկուան միջոցների  
տեսակէտից ուղղագրութեան հարցը քաղաքական հարց  
է, և հայ լեզուի ուղղագրութեան ռեֆորմի խնդիրը  
հայաստանի յեղափոխական իշխանութեան հերթական  
խնդիրներից մինը: Մեր օրերին այդ խնդիրը քննութեան  
շի գրում սկզբունքի տեսակէտից: Ըստ որում ռեֆորմի  
պահանջն արդէն իսկ հասունութեան վկայակիր ունի  
հայտուանի աշխատաւոր բազմութեան, կողմից: Ռեֆոր-  
մի խնդիրը կարօտ է միայն տեխնիկական մշակման:  
Անհրաժեշտ է նիշել խնդրի լուծման ճանապարհները,  
ցոյց տալ ռեֆորմի դորձնական եղանակները:

Այդ ուղղութեամբ է, որ կը կամենայինք գեռ լը-  
սել հայ լեզուի մշակների, առանձնապէս մասաների լու-  
սաւորութեան դործով մտահոգւածների, խօսքը, ու կը շ-  
սել նաև բոլոր նրանց առաջարկները, որոնք դիտողու-  
թիւններ կարող էին անել զբաղեցնող խնդրի մասին:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀՅԴ  
5-65





# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՊՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՌԵՖՈՐՄԻ ՄԱՍԻՆ\*)

## Ա. ԱՆԵԼԻՔ ԲԱՐԵՓՈԽՈՌԻՄՆԵՐԸ.

Ըստնամուր սկզբունքներ.—1. Ուղղագրութեան բարեփոխութիւնը պէտք է հիմնելի դպրոցական—գրական արտասանութեան վրայ և գրութիւնը մօտեցուի արտասանութեանը. 2. Փոփոխութիւնը պէտք է այնպէս լինի, որ բացառութիւններ չնեան և, ըստ կարելոյն, քիչ բառերի գրութիւնը տարրերուի եղածից. 3. Փոփոխութիւնը պէտք է հիմնաւորւած լինի հնչարանական ահասակէտով և պատմականօրէն, միաժամանակ և, ըստ կարելոյն, բաւարութիւն սույ զաւառական արտասանութեանը:

## I. ԱՌՈՋԱՐԿՈՒԹԻՒՆ.

0 և է տառերը զուրս ձգել այրբենարանից և ամեն դէպքում ո և է հնչիւններն արտայայտել ո և է տառերով, որոնց անունները պէտք արտասանել ոչ թէ իրրե վո և յէ երկտառ վանկեր, այլ սկզբնական ձևով իրրե օ և է պարզ ձայնաւորներ:

1. Ո և է տառերը բոլոր բառերի մէջ, առանց բացառութեան, այժմ գրական լեզուի մէջ պահում են իրենց սկզբնական բաց ու կարճ օ և է հնչիւնները: Այդ տառերի ուղղագրութիւնը ենթակայ չի եղել փոփոխութեան, և այժմ էլ գրանց գրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու համար՝ ոչ մի հնչարանական և պատմական հիմունք չունենք: 0 և է տառերն, ընդհակառակն, թէ հնչարանական և թէ գրութեան կողմից ենթակայ են եղել փոփոխութեան և մասամբ նոյն իսկ արդիւնք են այդ փոփոխութեան: Այն է՝  
ա) Սկզբնական աւ (=ա) երկրարբառը դարձել է երկար ու փակ ո պարզ ձայնաւոր, տարրեր հին կարճ ու բաց

\*) Տես նոյն հեղինակի յօդուածը «Մեր ուղղագրութեան մասին», Արարատ ամսագիր 1913 թ. № 11 և 12:

ո (=o) ձայնաւորից. ուստի միջին դարերում հարկաւոր են համարել այս նոր հնչիւնի համար նոր օ տառը մտցնել մեր այրբենարանի մէջ, Յետակայում այս միջնադարեան օ ձայնաւորը շարունակելով իր հնչափոխութիւնը՝ այժմ նոյնացել է հին ո (=o) ձայնաւորի հետ Այս այժմեան գրութեան մէջ, սակայն, ընդունւած է միջնադարեան ուղղագրութիւնը ան=0, որ այլն չի համապատասխանում մեր արդի արտասահնութեանը, — որից և առաջանում է նոյն ձայնաւորի համար երկու տառի գործածութեան դժւարութիւնը: Եթէ միջին դարերում առաջին՝ ան=0 հնչափոխութեան պատճառով նոյն իսկ նոր տառ են մտցրել մեր այրբենարանի մէջ, այժմ նոյն հնչիւնի երկրորդ՝ օ=0 հնչափոխութեան պատճառով մնենք չպիտի դժւարանանք միջնադարեան օ տառի տեղ, որ այլ ևս համապատասխան չէ մեր արտասահնութեանը, ո (=o) տառը զրկի, մանաւանդ որ այս երկրորդ շրջանի օ=0 հնչափոխութեան վրայ և որոշ թւով բառեր ու ածանցներ արդէն զրում ենք ոչ թէ միջնադարեան օ տառով, այլ հին ո (=o) տառով, այսպէս օրինակ՝ հին՝ աւոխ, աւնիր, միջնադարեան օսոխ, օնիր, նոր՝ սոսխ, ոճիր (*զրական-դպրոցական արտասահնութեամբ այժմ՝ վոստի, վոճիր*). հին՝ ձնուդի, միջնադարեան ձնուդի, նոր՝ ձնուդ: Այսպէս և ող վերջաւորութիւնն ամեն դէպրում զրող, զնացող, զարմացող և այլն, որ այլ ևս չենք զրում զրող, զնացող, զարմացող: Նոյնպէս և կան զրւածներ և զրողներ՝ քող, թափոր, լոռ, մորուր, շոշափել, ոճառ, ձոճել, ողիկ, որորան և այն փոխանակ՝ քող, թափոր, լոռ և այլն: Մեզ մնում է միայն մեր ուղղագրութեան բարեփոխութեան այս պատճական ընթացքը, որ համապատասխան է մեր այժմեան արտասահնութեանը, ընդհանրացնել օ=ով զրուդ բոլոր բառերի վրայ, օ տառի փոխանակ՝ զրկելով ու:

թ) է տառը սկզբնապէս եղել է երկար կամ վակը օ (3) հնչիւնի հնչանագիր և կամ յաճախ փոխանակել է և + 1 միութեան. բայց այժմ դա էլ կորցրել է իր սկզբնական հնչիւնը և արտասահնում է ինչպէս հին կարճ ու բաց և (=c, 3) տառը, որից առաջանում է նոյն ձայնաւորի համար երկու (b, է) տառերի գործածութեան դժւարութիւնը և բանի որ և տառն ամեն դէպրում պահել է իր սկզբնական հնչիւնը և և տառի հնչիւնն, է վերածել և տառի հնչիւնին, պէտք է, հետեւելով այս հնչափոխութեանը, և տառի փոխանակ զրել և:

և=ով զրուդ բառերի մի մասի և տառով զրութիւնը լոկ զրափիկ նմանութեամբ է տառջ եկել, փոխանակ և=ով զրութեան,

Բնչպէս զանուում են ձեռագիրների մէջ՝ մեկ, զմբեր, զեր, ծալուտ-կին, տերութիւն, թէ, երեւ և այլն։ Այսպիսի բառերը ե-ով զրելով, լոկ հին ուղղագրութիւնն ենք վերտականգնած լինուում։

Բայց երի վերջաւորութիւնների մէջ՝ ասէ, ասէք, ասէր, և աս-ուը փոխանակած է ե+լ միութեան իրրեւ ասէլ, ասէլք, ասէլը (ինչպէս զարմանաւ), զարմանալք, զարմանալը ձեերի մէջ լ տառը)։ Այսօն սակայն, հնչափոխութեամբ, վերջաւորութեան այս լ տառն այլ ևս չի արտասանուում։ բայց մինչդեռ՝ արտասանուութեանը հնաւելով՝ զրում ենք առանց լ տառի՝ զարմանաք, զարմանար, նոյն ձեերը ուրիշ բայց երի համար՝ զրում ենք ասէք=ասէլք, ասէր=ասէլը, թէպէտ և արտասանուում ենք առանց լ-ի՝ ասէլ, ասէր։ Բնականարար այս սուուզարանորէն անյարիր զրութիւն-ները միակերպութեան վերածելով՝ պէտք է միշտ առանց չար-տասանուող լ տառի զրել՝ զարմանա, ասէ, ասէր, ասէր։ Այսպէս և օժանդակ բայց միակերպ և տառով՝ եմ, ես, ե, ենք, եք, են, եր, և ոչ յոզնահի երկրորդ գէմքը էր=եյր, և անցեալ անկատար եղակի երրորդ գէմքը էր=եյր, քանի որ այժմ և տառն այլ ևս ել միութեանը չի փոխանակում, այլ հնչիւնով պարզապէս նոյ-նացել է և տառի հետ։

Այս օժանդակ բայց անցեալ անկատար ժամանակը հին ուղղագրութեամբ զրեւէ է՝ եի, եիր, եիք, եիք, եին, ինչպէս կու-րելի է տեսնել շատ ձեռագիրների մէջ։ Յնտագայում այս երկու ձայնաւորի մէջ յօրանջը (hiatus) վերացել է, ինչ որ յատուկ է մեր նոր լիդուին, և երկու ձայնաւորների մէջ մասել է լ կիսատձայ-նը, իրբե ելի, ելիր, ելաք, ելիք, ելին։ բայց որովհետեւ հին ուղ-ղագրութեամբ եյ=է, ուստի առաջ է եկել միջնադարին եի, եիր, եիք և այլն զրութիւնները։ Այս վերջին միջնագարեան զրութեան ձեն այժմ ևս համապատասխան չէ մեր արտա-սանուութեանը, որովհետեւ այժմ է=եյ չէ, որ ելի զրելու փոխանակ ել զրենք. ուստի պիտի վերտառնալ հին ուղղագրութեանը, միայն, քանի որ յօրանջը վերացել է, պէտք է զրել ելի, ելիր, ելիք, ելիք, ելին ձեռվ, ինչպէս որ յաճախ զրում են ուղղագրութիւն շառվորողները։

Քրիստոնեութիւն, հետական և նման բառերի զրութեան մէջ ևս և տառը հաւասար է ե+լ. զրանք կազմւած են քրիստոնեայ, հրեայ ձեերից, որոնց վերջի եայ զանկի ա ձայնաւորը կորչում է, ինչպէս սովորաբար լինում է, երբ շեշտն անցնում է յաջորդ վանկին, և կազմւում են՝ քրիստոնեութիւն, նրեյական. և որովհե-տեւ հին ուղղագրութեամբ ել միութեանը փոխանակում է և տառը, ուստի առաջ են եկել քրիստոնէութիւն, հրէական զըռւ-

թիւնները: Այժմ սակայն, քանի որ և տառն այլ ևս չի փոխանակում ել միութեանը, ուստի պէտք է զրել քրիստոնեյութիւն, հրեյական, այսինքն բառակազմութեան ժամանակ պահել քրիստոնեայ, հրեայ բառերի յ տառը, որ և արտասանում ենք, ինչպէս ծառայ արտասանում ենք ծառա, րայց ծառայութիւն, ծառայական: Նոյնպէս՝ մարդարէկական և նմանները զրել՝ մարդարեյական, բովեյական և այլն:

2. Գործնականորէն աւելի նպատակայարմար է օ և է տառերի փոխանակ ո և և զրել, քան ընդհակառակն, որովհետեւ օ և է տառերով զրւող բառերի թիւը սահմանափակ է (անզործածական կամ սակաւ պատահող բառերն էլ տուծ, օ-ով զրւում են ընդամենը մօտ 120 արմատ, իսկ ե-ով մօտ 100), մինչդեռ ո-ով զրւող բառերը հազարներով են, և աւելի ևս ե-ով զրւող բառերը: Այս թիւն աւելի մեծ է ո-ի համար՝ որդ, ընդ, ոց, ոտ, ուր, և այլ ածանցներով և մանաւանդ գործիական հոլովի ով վերջառութեամբ, որ թէ գոյականների և թէ անորոշ զերբայի վրայ է զրւում (անով, տեսնելով). իսկ ե-ի համար յոզնակի թիւ և անորոշ զերբայի վերջառութիւններով (անելը, աների, աներից և այլն, տեսնելը, տեսնելու, տեսնելով): Հասկանալի է, որ մի քանի տասնեակ բառերի ուղղագրութիւնը փոխելու տեղ՝ կարելի չէ հազարաւոր բառերի ուղղագրութիւնը շուռ տալ և զրանով ոչ միայն արդի զրագէտ սերնդին շատ աւելի մեծ զժւարութիւն պատճառել՝ թողնելու իր սովորական զրութեան ձեր, այլ և նոր սովորող զրագէտներին պատճառ լինել կարելու հին ուղղագրութիւնից կամ զժւարութեամբ կարդալու հին զրերը և կամ այն հայերէն զժւածքները, որոնց մէջ կը պահի հին ուղղագրութիւնը: Մինչդեռ ո-ի և ե-ի տեղ՝ օ և է զրելը խիստ զգալի փոփոխութիւն կը մտցնի մեր ուղղագրութեան մէջ, օ-ի տեղ ո զրելը և ե-ի տեղ և զրելը, ընդհակառակն, բառերի մէջ զրեթէ աննկատելի կանցնի. որովհետեւ այժմ էլ բառական թւով այդպիսի բառեր ո-ով և ե-ով են զրում, փոխանակ օ-ով և ե-ով զրելու: Այսպէս առանձնապէս զժւարութիւն չի պատճառի զրել՝ ակոս, աղոթք, ամօթ, անոթ, արոս, արոր, բօթ, զործոն, զոտի, զրոշ, զրոսանք, զորք, թոթափել, խոսք, ծանօթ, ծզոտ, կարոտ, կրոն, կռչիկ, ճռճիկ, ճռոտ, մոր, չոշափել, պաշտոն, սոսի, տօթ, տոն, ցող, քող, և այլն. և կամ՝ աղետ, աղես, առարեկ, թեպետ, ժառանձն, կիտ, յիսէ, հանգես, հրաւեր, ձեթ, շեկ, պատնեշ, պարեն, պարտեղ, ստեղ և այլն:

Կան մարդիկ, որոնք աւելի յարմար են համարում ո և ե-

տառերի տեղ ո և կ գրել, այդպիսիները ոչ միայն մեր լեզվի հնչափոխութիւնը և մեր ուղղագրութեան պատմական զարգացումը նկատի չունեն, այլ և վերևում յիշւած հանգամանքը, այն է՝ զործնական չէ մի քանի տառեալ բառերի ուղղագրութիւնը փոխելու անդ հազարաւոր բառերի ուղղագրութիւնը փոխել Այդպիսիները ելակէտ ունեն միայն օ-ով և ե-ով սկսող բառերը:

Եւ իսկապէս, արդէն գրադէտ մարդկանց համար, որոնք վարժական բառի սկզբում ո տառը վո և ե տառը յի վանկէ կարդալու, բաւական զժւար կը լինի օ-ով սկսուղ բառերը ո-ով գրւած տեսնել և օ (և ոչ վո) կարդալ, իսկ ե-ով սկսող բառերը ե-ով գրւած տեսնել և է (և ոչ յի) կարդալ: Այս զժւարութիւնը, սակայն, շատ հեշտ յազմահարելի է, որովհետեւ նախ բառերի սկզբում, ինչպէս ներքում կը բացատրի, վո և յի վանկերը բարեփոխւած ուղղագրութեամբ ոչ թէ լոկ ո և ե տառերով պիտի նշանագրւեն, այլ վո և յի ձևով (վոտ, վոր, յերկու, յերկար). ապա՞ որ պիտաւորն է, օ և ե տառերով սկսուղ բառերը շատ քիչ են: Օ-ով սկսում են, մի քանի անգործածական բառեր գուրս թողած, ընդամենը բան բառ, իսկ ե-ով սկսում են, օժանդակ բայց (որի մասին վերևում բացադրեց) և գաւառական բառերն էլ առած, ընդամենը տառը բառ՝ և (որից էակի, էի, էիր և այլն), էզ, էշ, էլ, էզուց, էրիկ (ծագած՝ այլ, այդուց, այրիկ բառերից), էր, էհ, էժան (փոխանակ ածան ձեի): Արդ եթէ արդի գրադէտը զրում է ով, ովիլիսնոս, ովասնիս, ովազիս և բառի սկզբում ո տառը կարգում է ոչ իրրե վո, այլ իրրե օ, նա պէտք է կարողանայ մի քանի բառ էլ նոր վարժեկ այդպէս կարդալու, ոդնել, ոդուտոս, ոգուտ, ոդ, ոթեան, օժանդակ, օժիտ, օծել, օձ, օդի, օշարակ, օտար, որ, որէնք, որիորդ, որոր, ոդ (կամ զրոզներ՝ պակ, որորան), որհնել, օճառ: Նոյնպէս՝ ե, եյակ, եզ, եզուց, ել, եշ, եջ: Այսպիսի մի երեսուն բառի նոր զժագրութեանն աւելի շուտ կը վարժեի մեր աշխն ու ձեռքը, բան տառեալ հազարաւոր բառերի կերպարանափոխ եղած ու զդագրութեանը, ինչպէս են՝ սօնօրէլօվ, բօրօքվէլ, խօտօրէլօվ, կօտօրէլօվ, ձօլօրէլօվ, խօրտակէլօվ, բօլօրօվին, բօցէրօվ, բօղօքէլօվ, գօվէլի, զօրձէլ և այլն և այլն, որոնց ուղղագրութիւնը փոխելու ոչ մի ճիմք չունենք, ոչ հնչարանական ու պատմական տեսուկեաներով և ոչ էլ գործնականօրէն: 1850 և 1870-ական թւականներից սկսած արևմտեան և արևելեան աշխարհարաների համար էլ եղել են անհատական փորձեր մեր ուղղագրութիւնը դիւրացնելու ո և օ, և և է տառերի նկատմամբ, բայց այդ փորձերն անյաջող են անցել միայն նրա համար, որ օ և է տառերն են ընդունել և ոչ ընդհակառակն, թէ չէ՝ բառերի

մէջ գոնէ այդ փոփոխութիւնը հեշտութեամբ կընդհանրանոր և մենք կը զրէինք՝ ամսթ, տոթ և այլն:

3. Կան բարբառներ. որոնց մէջ ո և և տառերը չեն պահել իրենց ոկղընական պարզ ու մարուր հնչիւնները, ինչպէս ուրիշ բարբառների և զրական լեզվի մէջ է, այլ մի հնչափոխութեամբ, որ յատուկ է և ուրիշ լեզուների, ո և և ձայնաւորները ոկղընց սուանալով, առաջինը՝ բաղաձայնական ու ձայնաւորը, իսկ երկրորդը՝ կիսաձայնը, երկրարբառային բնոյթ են ստացել. Այս, մեր չեն արտասանում իրեն ուր, այլ իրեն սաօր, մւր Երրեմի զրական լեզվի մէջ էլ կան մարդիկ, որ պահում են իրենց մայրենի բարբառի այս արտասանութիւնը: Արդ, ուզգագրութեան վերափոխման ժամանակ պահնելով ո և և տառերը, մենք ըստ կարելույց՝ բաւարարութիւն տած կը լինենք այդ բարբառների մէջ տեղի ունեցած հնչափոխութեանը՝ ուսու, եւսի, բացի այն բառերից, որոնց մէջ ո, և տառերի փոխանակ ո, և պէտք է զրել Բայց ո և և տառերով զրւող հազարաւոր բառերի դիմաց, այդպիսի բառերի թիւը չափազանց փոքր է, քանի որ ո և և տառերով զրւող բառերի կէսից աւելին զուտ զրական բառեր են և անպայման չկան այդ բարբառներում, ինչպէս են՝ ազօտ, արտօնութիւն, զործօն, զօշաբաղ, թօթափել, թօշնել և այլն. ազաւէն, չէն, սէզ, սէզ և այլն: Այդպիսի բարբառների մարդիկ չպէտք է անշուշտ պահանջեն, որ մի քանի տասնեակ բառերի համար, որ նրանք իրենց բարբառում տարբեր ձեռով են արտասանում, մեր ուզգագրութեան մէջ ոչ մի բարեփոխութիւն չմտնի ո և և տառերի նկատմամբ. մանաւանդ որ չպէտք է մոռանալ, որ և և ուտառերով զրւող հազարաւոր բառեր, յատկապէս զրարբից առած զրական լեզվի բառերը, ամենքը էլ միակերպ ենք արտասանում:

### III. ԱՌԱՋԱՀԱՆՐԻ ԹԻՒՅՆ.

1. Հնչիւնն ամեն զէպքում զրել միայն և տառով:

Մեր զրական լեզվի մէջ ունենք միայն մի և բաղաձայն հնչիւն, որ ծագել է՝

1. Հին և բաղաձայնից, որ անփոփոխ հասել է մեզ, ինչպէս վագել, ծով բառերի մէջ.

2. Հին բաղաձայնական և ձայնաւորից, որով կազմել են աւ. (=աւ), իւ. (=եւ) երկրարբառները, որոնք այժմ զարձել են օ=ո (=օ) և իւ (=յւ). ուրիշ բառերի մէջ, սակայն, այդ և տառն ամենայն հաւանականութեամբ արտասանել է և տառին շատ մօտիկ, մինչեւ որ այժմ բոլորովին նոյնացել է վիթ հետ, և

մենք այժմ աւագակ և կու բառերի մէջ և տառը բոլորովին նոյն ձեռք Հնքը արտասանում, ինչ որ և տառը վազել, կով բառերի մէջ.

3. Հին ու ձայնաւորից՝ զուարը, նուեր և նման բառերի մէջ, որոնց մէջ ու ձայնաւորը նախ իրրե բաղաձայնական և ձայնաւոր է արտասանել՝ զուարը, նուեր, ազա այժմ իրրե վ բաղաձայն, այնպէս որ զրւարթ, նըւէր բառերի մէջ նոյն վ հնչիւնն ենք լսում, ինչ որ վարդ, վեր բառերի մէջ:

4. Բառերի սկզբում ու ձայնաւորից առաջ աւելացած բաղաձայնական և (=ու=ս) ձայնաւորից, որ մի քանի բարբառների մէջ պահում է իր այս հնչիւնը և ու, որ արտասանում են իրրեւ ևս, որ (=սօտ, սօր), իսկ ուրիշ բարբառների և գրական լեզուի մէջ դարձել է պարզապէս վ, և այդ բառերն արտասանում ենք իրրեւ վոտ, վոր (=սօտ, սօր),

Մի անգամ որ հին վ բաղաձայնի հնչիւնն անփոփոխ է մնացել և հին ու ձայնաւորը և բաղաձայնական և ձայնաւորը որոշ գէպքերում դարձել են վ բաղաձայն, այս վերջինով և պէտք է փոխանակեն զրանք, և պէտք է զրենք՝ ափազ, կամ, թիվ, թիվն, զիւար և այլն, այսպէս և բառերի սկզբում աւելացած վ բաղաձայնը պէտք է զրեի վոտ, վոր, վուլի և այլն, ինչպէս որ զրում ենք վոնմակ. Այս հնչափոխութիւնը բառական հին է, և ձեռագիրների ու արձանագրութիւնների մէջ արգէն զանում ենք ւ-ի և ու-ի տեղ վ զրւած (ու-ի տեղ աւելի ւ զրւած, այսինքն ու-ի հնչափոխութիւն տառչին շրջանի արտասանութիւնն համեմատ, երբ ու ձայնաւորը զիս բաղաձայնական և ձայնաւոր է միայն դարձած եղիլ): Այժմ միայն պէտք է ընդհանրացնել թիվ, զիւար և նման զրութիւնները:

Աւելի զժւարութիւն կը պատճառի բառերի սկզբում ո-ից սուաջ վ աւելացնելը, ինչպէս և ե-ից առաջ լ աւելացնել, որովհետեւ բարբառների մեծ մասի մէջ այս գէպքում ու և և հնչիւններից առաջ վ կամ լ շի աւելանում և ոլորել, ուստալ, եւկու, կերար արտասանում են ինչպէս օլոր, օրու, օքա, բայց և այնպէս, քանի որ զրական լեզուի մէջ արտասանում ենք վոլորել՝ վորոսալ, յեւկու, յեկու, այսպէս և պէտք է զրել Այս ձեռք մենք շատ շենք հեռանալ հին զրութիւնից: Բայց այդ նոր ուղղագրութեանը վարժւածները, հին զրբերի մէջ և կամ հին ուղղագրութեամբ նոր զրբերի մէջ ահանելով ուստալ, ոլորել, ոլորուի, կամ եւկու, եկու և այլն զրութիւնները, կը կարգան օրոսալ, օլորել, օլորմի, եւկու, եկու, և այդպիսով նըւանք միայն պահած կը լինեն հին արտասանութիւնը, որ և յատուկ է բարբառների մեծ մասին, ուստի և հասկանալի զրեթէ ամենքին: Արտասանում

բարբառի մէջ, ինչպէս ընթէկ իրեւ անցիների լեզւի մէջ, միավանկ-ները միշտ չ և չ հնչիւնով են արտասանուում վոխ, վողք, վողջ, վոչ, վոտ, վոր, վորր, վորդ, վորձ, յես, յեզ, յեկ. Դուք ենք ար-տասանում միշտ նաև բուն գրական բառերը՝ վոզի, վոզօրել, վոզկոյզ, վոզնաշար, վոզորկ, վոզորել, վոճ, վորոշել, վոսոխ, վոստ, վոստան, վորկոր, վորովայն, վորովայթ, վորմ, վորջ, և այլն. Ուով սկսւող բառերի թիւը մօտ 85-է:

Մանօր. 1. և նշանագիրն, իրեւ սղագրութեան նշան, կարե-լի է պահել փոխանակ ելի կամ յել զրելու:

Մանօր. 2. Կը և չը մասնիկներից յատոյ չ և չ չպէտք է գրել, այլ ուղղագրութիւնը պահել այժմեանը, որ ար-տասանութեան համեմատ է՝ կ'երեայ, չ'երեայ, չ'եղաւ. կ'ուորի, չ'ուորեց և այլն:

### III. Ա. Բ. Ա. Զ. Ա. Բ. Կ. Ո. Խ. Թ. Ի. Ի.

Յ տառը պահել միայն կիսաձայն ի (ն) հնչիւնի համար, ինչպէս միայն եղել է այդ տառի հնչիւնը սկզբնապէս և այժմ էլ արտասանուում ենք ա և ո ձայնաւորներից յետոյ, ինչպէս՝ հրամայական, գոյական բառերի մէջ: Այդ տառ-սի անունը պէտք է արտասանել ոչ թէ իրեւ նի երկտառ վանկ, այլ իրեւ ի, ն, կէս ի ձայնաւոր: Ըստ այսմ:

1. Բառերի վերջում ա և ո ձայնաւորներից յետոյ զրւող անձայն՝ յ տառը դուրս ձգել՝ ծառաւ, ներքու:

2. Բառերի սկզբում հագագային յ տառի փոխանակ զրել է տառը՝ նատակ, արմար, փոխանակ յատակ, յարմար զրելու:

Կիսաձայն յ (=ն, ն) տառը իր սկզբնական հնչիւնը պահել է միայն բառերի մէջ ա և ո ձայնաւորներից յետոյ և մի քանի միավանկ բառերի վերջում, ինչպէս՝ պայծառ, ծառայական, հայ, խոյ: Բառերի վերջում այդ հնչիւնը այլ ես չի արտասանում և բնականարար պէտք է զրել՝ ծառաւ, կը զնա, ներքո, ինչպէս զրում ենք՝ նա, առա, քո, այս:

Բառերի սկզբում զրական լեզւի, ինչպէս և շատ բարբառ-ների մէջ, յ կիսաձայնը կամ դուրս է ընկել, կամ մեծ մասմա-նոյնացել է ն հագագի հետ, որից առաջանում է այս երկու տա-սի ուղղագրութեան գմւարութիւնը: Մի անգամ, որ յ-ին բառերի սկզբում ն է դարձել, այս վերջին տառով էլ պէտք է զրել այդ-պիսի բառերը՝ իսուն, նանախ և այլն, մօտ 100 բառ: Կան բար-

բառներ, սակայն, որոնց մէջ բառասկզբի յերը վերածւել են գրական լեզվից և միւս բարբառներից տարրեր մի նոր տեսակի հազարային հաշվենի, որ ոմանք գնառմ են լրակ շնչար հազար, աւելի ճիշտ կը լինէր տոել՝ ձայնեղ հազար, այսինքն՝ նոյն է հնչիւնն է, միայն հետը միացած կոկորդալարերի ձայնը, մինչդեռ մեր սովորական է հնչիւնն անձայն է, այսինքն՝ հետը միացած չունի կոկորդալարերի ձայնը (ինչպէս ը, զ, զ, զ ձայնեղ են, իսկ համապատասխան պ, կ, տ, ի անձայն են): թէպէտ և այս ձայնեղ հազարի ծագումը զիս ևս քննելի է, թէ արդեօք հին կիսաձայն յից է առաջացել թէ չէ, բայց եթէ ընդունենք նոյն իսկ, թէ զու հին յի հնչափոխութեամբ է առաջ եկել, գարձեալ դու արգելք չպիտի լինի, որ գրական լեզվի մէջ արդէն ն գարձած յերը ն տառով ևս զրւեն, բանի որ որոշ բարբառների այս ձայնեղ հազարը ոչ թէ հին կիսաձայն յ (—ն, ի) հնչիւնն է, այլ զուտ բարբառային մի նոր հնչիւն է, և ով որ մանկութիւնից իր մայրենի բարբառից շի վարժել դրա արտասանութեանը, նա նոյն իսկ դժւարութեամբ է կարօգանում լսել, ըմբռնել և իւրացնել այդ հնչիւնը: Գրական լեզվի մէջ կարիք չկայ այս առանձին տեսակի հազարը մտցնելու և կարելի էլ չէ մտցնել: բայց եթէ հարկ լինի այս նոր հազարյին հնչիւնը նշանագրել, զրա համար պէտք է ծառայի ոչ թէ կիսաձայն յ (—ն, ի) տառը, այլ բոլորովին նոր մի նշանագրի պէտք է ընդունել: Գրական լեզվի համար, սակայն, բաւական է մի հազարային հնչիւնի ն տառը, և եթէ կան մարդիկ, որ գրական լեզվով խօսեին, իրենց մայրենի բարբառի ազգեցութեամբ, որոշ թւով բառերի սկզբի հազարը ձայնեղ են արտասանում, այդ ոչ մի ազգեցութիւն պիտի չունենայ մեր ուղղագրութեան վրայ, որովհետեւ նախ՝ դա զուտ բարբառային արտասանութիւն է, ապա՝ այդպիսի բառերի թիւը շատ փոքր է, քանի որ յով սկսուող բառերի կէսից աւելին զրարարից են անցել աշխարհաբարին և այդ բարբառների մարդիկն էլ այդպիսի բառերը միակերպ անձայն ն հազարով են արտասանում հաճախ, հատակ, հօշոտել, հօդ, հորդ, հօխորտալ, հոգնակի, հարդարել, հարատե և այլն: Եւ վերջապէս մեր բառաձայնների զրութեան մէջ մի սովորական երեսյթ է նոյն կարգի ձայնեղ և անձայն բառաձայնների միմեանց փոխանակելը, և կամ կան բարբառներ, որոնց մէջ բ, զ, դ ձայնեղ հնչիւնները արտասանուում են իրենք, զի, զի, ինչպէս երևանի բարբառի մէջ բարի արտասանում է իրեն նհար, բայց դրա համար հարկ շի լինում բարի բառի ուղղագրութիւնը փոխելու: Մենք զրում ենք բարի, մի բարբառի

մարդ արտասանում է՝ բարի, մի ուրիշ բարբառի մարդ՝ բնարի, մի երրորդը՝ պարի կամ փարի, ինչպէս և կան այդպէս արտասանողներ են: Նոյնպէս կը գրենք նիմար, մէկը կարող է արտասանել անձայն և հազարով, միւսը՝ ձայնեղ հազարով, և այսպիսի գրութիւնը ոչ ոքի համար ոչ մի ուղղագրական դժւարութիւն չի պատճառիլ, քանի որ հազարային և հնչիւնի համար միայն մի տաս կունենանք և ամեն անդամ էլ հազարային հնչիւնը, լինի ձայնեղ թէ անձայն, այդ մի նշանագրով էլ կարտայացնեն:

3. Յա երկրարրառը՝ սենեակ՝ գրել յու ձեռվ՝ սենյակ,
4. Յօ երկրարրառը, որ երեսւմ է միայն եօրի և արյօն բառերի մէջ, գրել յու ձեռվ՝ յորն, արյօն,
5. Իւ երկրարրառը՝ արիւն՝ գրել յու ձեռվ՝ արյուն,
6. Ե տառից տառջ բառերի սկզբում, երբ աւելանում է յ հնչիւնը, գրել յ տառը, ուրեմն ոչ թէ եզ, եկ, երկար, այլ լեզ, յեկ, յերկար,
7. Ոյ կազակցութիւնը պահել միայն օյ արտասանութեան համար, ինչպէս խոյ բառի մէջ իսկ երբ ոյ (=յի) է արտասանում, այսպէս էլ գրել՝ յույս, բույր, որից լուսաւոր, բուրել՝ յ տառի կորուսուով:

Ոյ կազակցութիւնը սկզբնապէս արտասանել է իրրե օյ, լոյս = լոյս, ոյ արտասանութիւնը նոր է. ուղղագրութեան դիւրութեան համար ովէտք է ընդունել այս ոյ գրութիւնը:

Իւ երկրարրառը սկզբնապէս եղել է իւ (= օս), բայց յետադայում հնչափոխութեամբ դարձել է իւ (= ս), ուստի և միջին զարերում եւ գրելու տեղ՝ նեսեելով արտասանութեանը՝ գրել են իւ, և արևն, մեծութենի ձեւերի փոխանակ տառջ են եկել արին, մեծուրին. Բայց այս միջնագարեան արտասանութիւնն էլ չի մնացել այժմ, և իւ երկրարրառը այժմ արտասանում ենք ոչ թէ իրրե ս, ընկնող երկրարրառ, որի մէջ բաղաձայնի դեր է կատարում և (ս) ձայնաւորը, այլ իրրե ս, նյ բարձրացող երկրարրառ, որի մէջ բաղաձայնի դեր է կատարում ի (ս) ձայնաւորը: Ուստի եթէ միջին դարերում արտասանութեան հիման վրայ եւ ձեի տեղ դրել են իւ, այժմ էլ մեր արտասանութեան հիման վրայ՝ իւ ձեի տեղ կարող ենք գրել յու (= ս), ուրեմն ոչ թէ միջնադարեան գրութեամբ՝ արին, այլ արյուն, նոյնպէս ես, և երկրարրառներն այժմ չենք արտասանում իրրե ս, սօ, այլ իրրե

ia, io, (նա, նօ). սենեակ բառն, օրինակ, այլ ևս չենք արտասահմում իրեն սեռի սեռի, այլ իրեն սեռի, (սենիակ). ուստի պէտք է զրել՝ սենյակ, արդյոք:

Ե պարզ ձայնաւորը, ինչպէս վերեւում բացատրւեց, սկզբից ստացել է բաղաձայնական լ (= ի, ն) հնչիւնը. Գրական լիգի մէջ, բառերի միջում, այս հնչափոխութիւնը չի ազդել. Բառերի սկզբում, սակայն, ընդունւած է յի արտասանութիւնը, ուստի պէտք է այսպէս և զրել Արոշ թւով բառեր հնումը հենց այդպէս զրւել են՝ յեղանակ, յելուզակ, յերկար, յերասան և այլն Անշուշտ, զրագէտ մարդկանց համար գժւար կը լինի յով սկսող բառերը նույն զրւած տեսնել և, ընդհակառակն, մօտ 100 բառ, որ յով չեն սկսում. այսպէս զրւած տեսնել. բայց դա անհրաժեշտ է, եթէ ուզում ենք, որ զրութիւնը մօտեցի արտասանութեանը և միննոյն հնչիւնի համար երկու տեսակ զրութիւն չունենանք. Մառայական, ծառայով, ծառայութիւն, ծառայիլ բառերի մէջ յա, յօ, յու, յի բոլորովին նոյն ձևով ենք արտասանում, ինչ որ սենեակ, արդեօք, արխն, եկ բառերի մէջ ևս. եօ, յլ, եւ երկու գէպրում էլ նոյն կիսաձայն լ (= ի, ն) հնչիւնն է լսում. Արդ, մի անդամ որ այս կիսաձայնն ընդհանրացնում ենք բոլոր գէպրերի համար, այս նկատմամբ մեր ուղղագրութիւնը որոշ միակիրպութիւն է ստանում և հեշտանում է. որովհետեւ մի ընդհանուր սիստեմով կազմում են՝ ընկնող երկրարրաներ այ, ոյ (= օն), ույ, եյ, և բարձրացող երկրարրաներ՝ յա, յո, յու, յի, յի. այսինքն լ կիսաձայնը, ինչպէս մի բաղաձայն, նոյն հնչիւնով զրւում է ձայնաւորից և առաջ և յետոյ՝ այ, յա, ոյ, յու, յու, եյ, յի. Բառական է միայն, ուրինեն, և տասի հնչիւնը սովորել և միւս բաղաձայների նման զրանով ևս կարելի է վանկ կազմել առանց գժւարութեան և առանց սխալելու. թէ չէ՝ մի գէպքի համար եա, իւ և այլն պատճենով, միւս զէպքի համար՝ յա, յու, չի վերանալ ուղղագրական սխալն այս մասում և ծառայական, ծառայութիւն և այլն կարող են զրել՝ ծառաեական, ծառաեութիւն, ինչպէս և երբեմն զրում են ուղղագրութեան անվարժեները:

8. Ե (= է) տասից յետոյ, երբ ձայնաւոր է գալիս, զրել լ կիսաձայնը, ինչպէս եյի, եյիր, եյինք և այլն. եյակ, մարդարեյական, մարդարեյութիւն, բոպեյով, բոպեյական և այլն:

9. Եմ բայի միավանկ ձեմը (եմ, ես, ե, ենք, եք, են), երբ իրեն վերջայար բառ միանում են ձայնաւորով վերջացած նախորդ բառին, պէտք է զրել յեմ, յես, յե, յենք, յեր, յեն ձեռվ, ինչպէս՝ ծառայ յեմ, զիւզացի յիս և այլն.

Առաջարակ մեր նոր լեզվի ընդհանուր յատկութիւնն է, որ մինոյն բառի մէջ երկու ձայնաւոր իբար չեն յաջորդում յօրանջով (hiatus). երկու ձայնաւորի մէջ մտնում է յ կիսաձայնը. այսպէս միշտ ա, ո (==o), և (=e, ঃ) ձայնաւորներից յետոյ յաջորդ ձայնաւորից առաջ մտնում է յ. իսկ ու ձայնաւորը գտնում է վ (լեզու, լեզվի): Ե ձայնաւորի զրութիւնը միայն զեռ տառանում է այս նկատմամբ, այն է՝ յ ձայնաւորը յաջորդ ձայնաւորի հետ միանում է կամ յ կիսաձայնով, կամ ի ձայնաւորն ինքն իրրե կիսաձայն յ արտասանելով միանում է յաջորդ ձայնաւորի հետ. այսպէս օրինակ՝ միանալ, ձիով բառերն արտասանում են կամ իրրե միանալ, ձիով, կամ իրրե մյանալ, ձյով. այսպէս և խոալիս, միլիցիս և այլն արտասանում են իրրե թուալիս, միլիցես: Հենց այս պատճառով մեր բանաստեղծներն այսպիսի բառերը մի վանկով և աւելի և պակաս են հաշում. նայելով տեղին՝ միանալ համարում են երկու կամ երեք զանկ: Աչքի առաջ ունենալով յաջորդ ձայնաւորի հետ ի ձայնաւորի միացման այս տառանուող զրութիւնը՝ այս կարգի բառերի ուղղագրութիւնն անփոփոխ պէտք է թողնել. մինչդեռ ա, ո, և ձայնաւորների և յաջորդ ձայնաւորների մէջ միշտ պէտք է յ զրել: Այս մինոյն ընդհանուր յատկութեամբ և եմ վերջայար բայց, երբ բաղաձայնով վերջացած բառերից յետոյ է գալիս, արտասանում է իրրե էմ (em), իսկ երբ ձայնաւորով վերջացած բառերից յետոյ է ընկնում, քանի որ իրրե վերջայար բառ նրանց հետ միանում է իրրե մի բառ, երկու մէջ մտնում է յ կիսաձայնը. ես իմ' (—yes em), բայց՝ զու յես (—də yes), նոյնպէս նա յե, որդի յեմ: Այս կիսաձայն յ-ն ծառա յեմ, ներքո յեմ և այլն բառերի կապակցութիւնների մէջ անշուշտ նախորդ բառերի վերջի անձայն յ-ն է, որ յաջորդ ձայնաւորից առաջ պահում է, բայց քանի որ արտասանութեամբ միանում է վերջայար բային և երեան է գալիս նաև ի, ի, ու ձայնաւորներից յետոյ մարգարե յեմ, զու յես, որդի յեմ. ուստի աւելի զործնական է զրել բայի վրայ:

## Բ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՌԵՅՈՐՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱԿ Է ՏԻՑ

Ուղղագրութեան բարեփոխման ժամանակ, բացի վերևում դրած սկզբունքներից, նկատի են առնում սովորաբար նաև հետեւող երեք տեսակէները՝ մանկավարժական, աշխատանքի անտեսման և ընդունելութեան:

I. Մանկավարժութեան պահանջն է՝ հեշտ և արագ սովորեցնել անսխալ զրել և կարդալ Հենց այս նպատակին հասնելու համար՝ զրութիւնը զաղափարազրից ու վանկազրից անցնելով՝ դարձել է հնիւնազիր, այսինքն՝ խօսքը վերլուծել է իր առենապարզ բազազրիչ մասերին՝ հնչիւններին, որոնց թիւը փոքր է և որոնց համար միայն յօրինւել են առանձին պայմանական նշաններ՝ տառերը, որով և հնարաւոր է դարձել մի 30—40 նշանշանազիր սովորելով՝ զրել կարդալ ամբողջ խօսւածքը. Մանկավարժները կարող են մեթոդների մէջ իրարուց տարրերեւել և տարրերւում են. մէկը կարող է զրելուց սկսել, միւսը կարդաւուց, մէկը կարող է նախ՝ խօսքը բառերի վերլուծել, բառերը՝ վանկերի, վանկերին՝ առանձին հնչիւնների և ապա նոր առանձին հնչիւնների համար տառերը սովորեցնել, միւսը կարող է այս վերլուծութեանն ուշադրութիւն չդարձնել, այլ ուղղակի հնչիւններից ու տառերից սկսել և դրանցից անցնել վանկերի ու բառերի և այլն. —բայց ամենքի էլ վերջնական նպատակը մէկ է՝ հնչիւններն ու տառերը զուգորդել տալ իրար հետ և մէկով առաջ բերել միւսը՝ եթէ սովորողն արտասանում է մի բառ՝ բարի, որ ունի չորս հնչիւն, նա պէտք է կարդանայ այդ չորս հնչիւննին յատկացրած տառերը իրար կողքի գծազրել այն կարդով, ինչ կարգով որ հնչիւններն արտասանում է ինքը. և ընդհակառակին, եթէ նա ահանում է իրար կողքի գծազրւած կամ տպւած չորս տառ՝ բարի, պէտք է կարդանայ այդ չորս տառին յատուկ հնչիւններն իրար ետեից արտասանել տառերի կարգով իրեն մի ամբողջական միութիւն, բառերի ընտական վանկարաշխութեամբ: Ան թէ ինչի է ձգտում հասնել մանկավարժը՝ արագ և հեշտ կերպով:

Հասկանալի է, որ այրբենարանի խիստ հնչիւնական դրութիւնը,—որով լեզվի ամէն մի հնչիւն մէկ առանձին նշանազիր պիտի ունենայ և ամեն մի տառ միայն այդ մէկ հնչիւնի նշանազիրը պէտք է լինի, —ծայր աստիճանի գիւրացնում և առագացնում է զրել-կարգալ սովորողների զործը և վերացնում ամեն ուղղազրական գծւարութիւն: Այս պատճառով այն ազգերը, որոնք իրենց զրի ու զբականութեան սկզբում իրենց լեզվի համար յատուկ այրբենարան են յօրինել, աշխատել են այրբենարանը յարմարեցնել իրենց լեզվի հնչիւններին, ստեղծել ըստ կարելոյն խիստ հնչիւնական դրութիւնն: Մեր այրբենարանն էլ իր սկզբնական շրջանում, ինչպէս ընդունում են, ունեցել է այս կատարելութիւնը: Բայց դարձելի ընթացքում լեզվի մէջ հնչիւնները փոխւել են, իսկ բառերի զրութիւնը մեծ մասամբ մնացել

է հինը, ուստի և մեր այժմեան գրութիւնը յաճախ չի համապատասխանում մեր այբբենարանի հնչիւնական գրութեանը, որով և գրել-կարդալ սովորելու գործն և ուղղագրութիւնը չափազանց բարդացել և գծւարացել է, Այսպէս:

1. Ս (γ) պարզ ձայնաւորն այժմ՝ մի տասի փոխանակն նշանագրում է երեք մեռվ ու, ու, և, (ջուր, լոյս=լույս, արիւն =արյուն). բայց այս երեքն էլ նաև ուրիշ հնչիւնների համար են գործածում ուն իրրե վ (գուարթ=զվարթ), ուն իրրե օ (թողնել), այլ և իրրե վո վանկ (սոս=վոս), ևն իրրե վ (թիւ=թիվ):

2. Օ պարզ ձայնաւորը գրում է օ տառով, բայց բառերի մեծ մասի մէջ ո տառով:

3. Ե (Ը) պարզ ձայնաւորը գրում է և տառով, բայց բառերի մեծ մասի մէջ և տառով, որ բառերի սկզբում մեծ մասմբ նաև յէ վանկ է:

4. Վ (ի) բազաձայնական ձայնաւորը (կիսաձայնը) իր սկզբնական յ տառով արտայայտում է միայն բառերի մէջ ու, ու ձայնաւորներից յետոյ, իսկ ուրիշ դէպքերում է, ի ձայնաւորներով (սննեակ=սննյակ, հարիւր=հարյուր). կամ բառերի վերջում գրում է, բայց չի արտասահնում (ծառայ=ծառա). կամ թէ յ կիսաձայնն արտասահնում է, բայց չի գրում (բոլէական=բոլէյական):

5. Հ հնչիւնն երեիթ և տառով է գրում, երբեմն յ տառով:

6. Վ բաղաձայնը գրում է վ, ւ, ու տառերով և այլն, և այլն Անա մի խառն գրութիւն, որից նոր սովորողը բաւական դժւարութեամբ է զլուխ հանում, և երբ նա վերջի ի վերջոյ կարդալ սովորում է, ուղղագրութիւն սովորելու համար դեռ երկար աշխատանք է գործ դնում:

Վերեւում գրւած առաջարկութիւնները ուղղագրութեան բարեփոխման նկատմամբ՝ ուրիշ նպատակ չունին, բայց եթէ գրութիւնը ձայնաւորների, յ կիսաձայնի և վ բազաձայնի նկատմամբ՝ վերածել ըստ կարեւոյն խիստ հնչիւնական պարզ գրութեան, որով դիւրանում է գրել-կարդալ սովորելու գործը և ուղղագրութիւն սովորելու համար ոչ մի աշխատանք չի պահանջնում:

II. Ուղղագրութեան բարեփոխման վրայ՝ ոմանք ուզում են նայել նաև թուղթ ու թանաքի, գրելու կամ տառերը շարելու համար գործ գրւած ժամանակի տևատական տեսակէտից, Անշուշտ, եթէ մեր լեզուի հնչափոխութիւնը միայն այնպէս գործած լինէր, որ երկու հնչիւնը կամ երկու տառը մի հնչիւնի կամ մի տասի

վերածւած լինէին (զնացեալ=զնացել, ազաւթք=աղօթք=աղոթք այլ=էլ, զուարթ=զվարթ), կամ մի հնչիւն, ուրեմն և մի տառ գուրս ընկնէր (ծառայ=ծառա). և ոչ թէ, ընդհակառակն, նաև նոր տառեր աւելիանային (ոռ=վռա, ել=յեկ) և կամ մի տառով նշանակող մէկ հնչիւնը փոխւէր երկու տառով նշանակող ուրիշ մէկ հնչիւնի (լոյս=լույս, իւր=յուր), — այդ գէպքում բառերի զրութիւնը կը կարձանար, շարիւր համար աւելի քիչ ժամանակ կը պահանջէէր. և կարելի կը լինէր այդպիսի մի տնտեսական տեսակէտով էլ հիմնաւորել մեր ուղղագրութեան փոփոխութիւնը, որ և հեշտ ըմբռնելի կը լինէր սովորական մտածողութեան համար Եւ իսկապէս, ինչ աւելորդ մի աշխատանք և ծախը՝ բառերի վերջում զրել մի տառ, որ չի արտասանւում: Յայտնի է, թէ ուսւերէնում Ե տառի զուրս ձգւելով որքան ժամանակ և թուղթ ու թանաք է տնտեսում:

Այս տնտեսումը, սակայն, կտակ չունի ուղղագրութեան բարփոխման խիստ հնչիւնական սիստեմի հետ. ոտ պատահաբար միայն կարող է միանալ կամ չմիանալ ուղղագրութեան բարեփոխման հետո կան լիզուններ էլ, որոնք ունին 24 և նոյնիսկ աւելի պակաս հնչիւններ, ուրեմն և 24 տառ միայն պիտի սովորել, ձուլել, զրի մերձնայի վրայ ունենալ և այլն. մինչդեռ մեր երեխանները պէտք է սովորեն 38 տառ, ուրեմն աւելի ժամանակ պիտի զործ զնեն, և աւելի ծախը պէտք է անենք տառերի մայրեր շինելու ու տառեր ձուլելու համար և այլն: Խնչպէս որ այսակող, տառերի թւի նկատմամբ, ոչինչ անել չենք կարող, որովհետեղ դա ծազում է մեր լիզուի բնական յատկութիւնից, նոյնպէս և, եթէ մեր հնչափոխութեամբ՝ բառերն ընդհանրապէս աւելի մնեացնել են, քան փոքրացնել, մենք չենք կարող ոչինչ անել՝ գրութիւնն ու շարւածքն արագացնելու և թուղթ ու թանաքի տնտեսման նկատմամբ, տառայ հակասելու հնչիւնական սիստեմին և տառայ դժւարացնելու զրագիտութիւն և ուղղագրութիւն սովորելու զործը: Դրա համար կան տեխնիկական միջոցներ՝ սղագրութիւն, զրող մեքենայ, շարող մեքենայ և այլն:

Անզուշա, կարելի է սովորական գրութեան մէջ ևս այնպիսի սիստեմ ընդունել, որ զրւածքն ու շարւածքը որոշ չափով կար ճանայ, ուրեմն և ժամանակի ու աշխատանքի անտեսում լինի:

1. Կարելի է ձայնաւորները չզրել (ինչպէս արարերէնում անում են սովորաբար). բայց զա գրութեան մի անկատար ձեւ է և մեծ զժւարութիւնների հետ կապւած. այս չորս բաղաձայնը՝ կարլ կարելի է կարդալ՝ կատարել, կոտորել, կատարեալ և այլն: Մեր լիզուի զրութեան մէջ այժմ, հին խիստ հնչիւնական սիստեմի

լուծելով, կայ այսպիսի մի սղագրութիւն. Ա ձայնաւորը բառերի մէջ այժմ սովորաբար չենք զրում. Փորձւած մանկավարժները պիտին, թէ զրադիտութիւն սովորեցնելու առաջին շրջանում այդ տառը չպրելը որքան գժւարութիւն է պատճառում. բայց և այսպէս վերեւում դրւած բարեփոխութիւնների մէջ չի առաջարկւած և ձայնաւորը միշտ զբել որովհետեւ զրա արտասահմութիւնը կայուն չէ. Բ ձայնաւորի չպրելով մեր բառերի շարւածքի մէջ լինում է որոշ տնտեսում:

2. Հին զրիները եւ տառերի միացումից առաջ են բերել և նշանը, որ միաժամանակ և շատ գործածական շաղկապ է. բարեփոխւած ուղղագրութեամբ եւ բառերի մէջ դառնում է հիմ, իսկ շաղկապը՝ յեզ, բայց սղագրութեան համար առաջարկւած է պահել և երկու կամ երեք տառի փոխանակ, ուրեմն, մի նշան.

Հին զրիներն արագագրութեան համար ունեցել են և զպատռված զրութիւնները, որոնք զործածելիս են եղել և հին տպագրութիւնների մէջ՝ սրբուի՛, սրբուե՛, սրբու՞ր և այլն. Ա՞ծ, Ա՞յ և այլն. բայց այժմ զործածութիւնից զուրս են ընկած:

3. Կան լիզուներ, որ երկու հնչիւնի համար մի տառ են ընդունած, ինչպէս սուսերէնում յ, է, յօ, ը=նա, նօ, նյ, ի՛ երկրաբանները մի տառով են նշանագրում. Հայերէնում ևս հնչափոխութեամբ առաջ է եկել նոյնը. բառերի սկզբում ո=վո, ե=յի, Անշուշա, երկու տառի տեղ մի տառ զրելն արագացնում է զրութիւնն և շարւածքը, բայց հայերէնում դա ընդունելի չի կարող լինել բարեփոխւած ուղղագրութեան մէջ: Ծուսերէնում դա զրութեան մի սիստեմ է, և միշտ էլ նոյն տառերով նոյն երկու հնչիւններն են արտայայտում, կամ նոյն երկու հնչիւնները նոյն տառերով են արտայայտում, իսկ հայերէնում դրանք հնչափոխութեամբ առաջացած սղագրութիւններ են միայն և, քանի որ հնչափոխութիւնն ամեն զէպքում միակերպ չի ազդել, ո տառը նաև օ հնչիւնի նշանագիր է, այլ և ու հնչիւնի. իսկ վսկանկը զրում է ոչ միայն ո տառով, այլ և վո, ւո, ուն տառերով. նոյնպէս և տառը նաև և հնչիւնի նշանագիր է, իսկ յև վանկը զրում է նաև յի, յէ տառերով: Աւստի բարեփոխւած ուղղագրութեան մէջ կարելի չէ թղթի ու շարւածքի տնտեսութեան համար միայն պահել ո=վո, ե=յի զրութիւնները: Բարեփոխւած ուղղագրութեան մէջ ոչ թէ այս տնտեսումը նկատի պիտի առնեի, այլ մի միայն խիստ հնչիւնական սիստեմը, որի հետ միացած է մանկավարժական, այսինքն զրել-կարգալու և ուղղագրութեան ուսման համար զործագրելի ժամանակի և աշխատանքի անակնումը: Ծուսերէնում Ն տառը զուրս են ձգել

ոչ թէ նրա համար, որ գրելն ու շարելն արագանայ և թուղթ ու թանաքի խնայողութիւն լինի, այլ որովհետեւ այժմեան լեզվի մէջ այդ տառն այլ ևս չի արտասանւում:

Շարւածքն արտղացնելու, ուրեմն և գրաշարի աշխատանքը փոքրացնելու համար, կարելի է մեր ու ձայնաւորը միասին իրեն մի տառ ձուլել, այն ժամանակ գրաշարն ստիպւած չի լինի այդ ու շարելու համար և մեքենագիրը տպելու համար, փոխանակ մի տառի, երկու տառ շարել, իսկ սրբագրիչն էլ ստիպւած չի լինի երկու անգամ աւելի աշխատանք գործ դնել՝ սրբագրելու համար։ Հաշւած է, որ հին ուղղագրութեամբ, այնքան շատ է ու երկատուի գործածութիւնը, որ գրաշարը 16 երեսը կը շարի այնքան ժամանակում, որքան հարկաւոր է  $15\frac{1}{4}$  երես շարելու համար։ Այս այնպիսի մի տնտեսում է գրաշարի և սրբագրչի ժամանակի, որ այս տեխնիկական միջոցը միայն կը փոխարինի ամենայն աւելի աշխատանք գրաշարի և սրբագրչի համար։ Բացի այդ, եթէ ու երկատուը միասին ձուլած լինի, այն ժամանակ ոյ և իւ երկրաբաների և եռ կապակցութեան, փոխանակ ոյ և լու, ելու գրութիւններով շի աւելանում գրաշարի աշխատանքը, և մնում են միայն վո և յի գրութիւնները, փոխանակ ո, և տառերի, և և ձայնաւորից յետոյ աւելացած լ տառը (բացի ելու կապակցութիւնից), այսինքն՝ աւելացած լ և լ տառերը։ բայց դա էլ մեծ բան չէ, ինչպէս երեսում է ներքեսում գրւած հաշւից։

Եիրավանպագէի «Արտիստիք» առաջին 16 երեսի մէջ, հաշւելով երեսը 30 տողից և տողը՝ 30 տառից, բարեփոխւած ուղղագրութեամբ՝ 1) աւելանում են՝ կ տառը (վո փոխանակ ո-ի) թւով 66, 1 տառը (յի փոխանակ ե-ի) թւով 89, 1 տառը (ելի, ելու, յու կապակցութիւնների մէջ փոխանակ եի, եռ, իւ գրութիւնների) թւով 50, ու երկատուը (ու փոխանակ ո-ի, լույս—լոյս) թւով 26, աւելանում է ուրեմն ըմդամենը՝ 231 տառ։ 2) պակասում են՝ յ, և տառերը (ծառա, երեկոյան և նման բառերի մէջ փոխանակ ծառայ, երեկոյան) թւով 36, ու երկատուը (զվարթ փոխանակ զուարթ և այն գրութիւնների մէջ) թւով 65, ընդամենը՝ 101 տառ։ Աւելացած տառերի թւոց հանելով պակասած տառերի թիւը,  $231 - 101 = 130$ , աւելանում է, ուրեմն, ընդամենը՝ 130 տառ, ուրեմն  $4\frac{1}{3}$  տող 16 երեսի մէջ, Այսպէս հին ուղղագրութեամբ Իսկ նրանց համար, որ զուարթ և նմ. գրում են արդէն մի տառով զւարթ (թւով 65), աւելանում է 195 տառ, ուրեմն,  $6\frac{1}{2}$  տող 16 երեսի, որ է՝ 480 տողի մէջ,  $4\frac{1}{3}$  կամ  $6\frac{1}{2}$  տողի աւելի շարւածքի տնտեսում այնքան փոքր է մանկավարժական մեծ տնտեսման զիմաց, որ զրա համար պէտք չէ կանգ տառել մեր

ուղղագրութիւնը բարեփոխելու: Սակայն երբ ու երկտառը միասին ձուլւած լինի, զբաշարի աշխատանքը ոչ միայն չի աւելանում, այլ, ընդհակառակն, պակասում է նոյն իսկ բարեփոխուած ուղղագրութեամբ: Այսպէս՝ «Արտիստի» նոյն երեսներում կան, ու ձայնաւորը թւով 369. ապա՝ ու ձայնաւորը փոխանակ ուի (լույս փոխանակ լոյս) թւով 26. ու ձայնաւորը փոխանակ ւ-ի (յու փոխանակ իւ) թւով 30, որոնք չեն աւելանում ու երկտառի միասին ձուլւած ժամանակ, նոյնպէս և եյու կապակցութիւնը, փոխանակ լու կապակցութեան, ուինչ չի աւելացնում, թւով 3. Ընդամենն, ուրիմ, 59 տառ (26+30+3) չի աւելանում, իսկ 369 տառ պակասում է, եթէ ու երկտառը միասին ձուլւած լինի. երեսուր միասին 428 տառ, որից հանելով աւելացած տառերի վերի գումարը 130, տեսնում ենք պակասում է 298 տառ, ուրիմն 10 տող: Իսկ նրանց համար, որ զւարթ և նման, զրում են արգէն մի տառով զւարթ (թւով 65 տառ), պակասում է 298—65=233 տառ. մօտաւորապէս  $\frac{74}{5}$  տող:

Այս հաշիվը, որ, հարկաւ, մօտաւոր ճշտութիւն ունի, պարզ ցոյց է տալիս, որ շարւածքի և թուղթի ու թանաքի անտեսման տեսակէալը ոչ մի արժէք չպիտի ունենայ մեր ուղղագրութեան բարեփոխման ժամանակ:

III. Շարուածքի և թուղթի ու թանաքի անտեսումից շատ աւելի կարենը է ընդունելուրեան խնդիրը: Դրագէտները, որոնց վերաբերում է ընդունելութեան խնդիրը, այնքան կապւած են մեռում դժուարութեամբ սովորած ուղղագրութեանը, որ չեն յօժարում զրանից կտրուել և մի նոր նեղութիւն պատճառել իրենց՝ մի նոր բան էլ սովորելու: Բացի այդ՝ սովորած տառն այնքան է կաշկանդում հնչարանութեան ուսմանն անվարժ մարդկանց, որ նրանք չեն կարողանում նոյն իսկ հնչիւնների վերլուծութիւնն ուժունել, ուստի և կառչած են մեռում աւանդական ուղղագրութեանը:

Այսպիսի զրագէտներին մեծ դժուարութիւն չպատճառելու համար՝ կարելի է ուղղագրութեան բարեփոխումն անել նաև աստիճանաբար, չպահելով սկզբում խիստ հնչիւնական զրութիւնը: Կարելի է, ուրիմ, առայժմ չզործադրել առաջարկուած բարեփոխութիւններից այնպիսիները, որոնք բաւական դժուարութիւն կը պատճառեն զրագէտներին. այն է՝

Ա. Պահելով բառակազրի ու-վո, ե-յի, օ, է զրութիւնները, նոյնպէս և իս, եօ, իւ երկրաբրառները, այժմ անմիջապէս անել հետեւալ բարեփոխումները.

1. Բառերի մէջ և վերջը բոլոր ու և տառերի փոխանակ գրել ու են.
2. Ետառող գրել և եմ բայի բոլոր ձեռքը՝ եր, եք, եյի, եյիր և այլն, ինչպէս և զրեք, զրեյի, զրեյիր, զրեր և այլն,
3. Բառերի մէջ և վերջը վ հնչիւնն այս տառով միայն գրել՝ ավար, զվարթ, թիվ,
4. Բառերի սկզբում յ տառի տեղ գրել վ հատակ, հարմար:
5. Բառերի վերջում անձայն յ-երը դուրս ձգել՝ ծառա:
6. Բառերի մէջ և տառից յետոյ, երբ ետեից դալիս է մի ձայնաւոր, աւելացնել յ տառը՝ եյի, զրեյի, քրիստոնեյութիւն, բոգեյական:
7. Գրել լույս և նմ. փոխանակ լոյս գրելու:

Այս փոփոխութիւններով, որ կարելի է անմիջապէս անել, գրագէտները մեծ զժուարութիւն չեն կրիլ, որովհետեւ նրանք ստիպուած չեն լինիլ՝ բառերի սկզբում, հակառակ իրենց սովորածի, տառը ն կարդալու, ո տառը օ կարդալու, ինչպես և ն տառը կ կարդալու և ոչ յի: Բայց և այս թերի բարեփոխումով, ինչքան էլ որոշ չափով կը թեթեանայ մեր ուղղագրութիւնը, գրել-կարդալ սովորելու և ուղղագրութեան ուսման համար գեն չառ դժւարութիւններ կը մնան. այն է՝ ունենալ օ, օ (Յ) հնչիւնների համար երկրկու տառ՝ ո, օ, և ն, է, որոնք երկումն էլ զրւում են բառերի սկզբում, այն էլ նոյն հնչիւնով. բառերի սկզբում վ, յ արտասանել ու չգրել, յ (Ո) հնչիւնի համար ունենալ յ տառը, միաժամանակ և գրա տեղ գրել նաև ի, ի և այլն:

Բ. Կարելի է աւելի պակաս զիջում ևս անել գրագէտներին, և առայժմ, դուրս ձգելով օ և է տառերը, պահել միայն բառասկզբի ո-վո և-յի գրութիւնները. ինչպէս և եա, եօ, իւ երկրարանները. Դրանով աւելի ևս կը թեթեանայ մեր ուղղագրութիւնը. Բայց և այնպէս դարձեալ կը մնան որոշ դժուարութիւններ. այս են՝ յա, յո, յու երկրարանները բառերի մէջ ա, օ, և ձայնաւորներից յետոյ այսպէս են զրւում, իսկ բառերի մէջ բաղաձայններից յետոյ, ինչպէս և բառերի սկզբում, զրւում են եա, եօ, իւ ձեռովի Յեւ երկրարանը բառերի մէջ զրւում է այսպէս՝ յի, իսկ բառերի սկզբում միայն և տառով, այսինքն յ տառը շի զրւում. Վո վանկը զրւում է այսպէս, բայց բառերի սկզբում վ տառը ո-օ հնչիւնից առաջ չի զրւում, թէպէտ արտասանուում է. ու ձայնաւորը իւ երկրարանի մէջ զրւում է յ տառով. որ և օր բառերը զրութեամբ նոյնանում են: Դարձեալ, ուրեմն, մի բաւական բարդ զրութիւն գրել-կարդալու և ուղղագրութեան ուսման համար:

Դ. Եւ վերջապէս, զբագէտներին անելիք զիջումը կարելի է մինիմումի ևս վերածել, այն է՝ դուրս ձգելով ո և և տառերը և ես, ևո, իւ երկրաբանների տեղ յա, յա, յու զրելով, պահել բառասկզբի ու-վո, և-յի զրութիւնները, Այս գէպքում զբագիտութեան ուսման համար այս գմուարութիւնը միայն կը մնայ, որ բառերի սկզբում ուսու և ե-է տառերից առաջ վ, և տառերը չեն զրուիլ, թէպէտ սովորաբար կարտասանուեն, իսկ թիրուաները՝ կանեն միայն հետեւել տեսակիւուզգագրական սխալները՝ բազար, նաևլ,— այսինքն բառերի մէջ ևս ո-ից առաջ վ և ե-ից առաջ և չեն զրիլ, ինչպէս և այժմ յաճմխ զրում են աշակերտները,— և վստ, յերկու, այսինքն բառերի սկզբում, հետեւելով տրտասանութեանը, ե-ից առաջ յ և ո-ից առաջ վ կըզբեն. ինչչոչս և այժմ երբեմն զրում են աշակերտները՝ վոտ կամ ևսու Այս վերջին վոտ, յերկու զրութիւնները կարելի է նոյն իսկ թոյլատրելի համարել, ուս, եւկու զրութիւնների հետ միաժամանակ Այս մինիմալ զիջումը մասամբ հիմնաւորում է նրանով, որ բառասկզբի ու-վո, և-յի արտասանութիւնը գեռ բոլորովին կայուն չէ, քանի որ զբական լեզուի մէջ ևս, թէպէտ սովորաբար արտասանում ենք յեղաւ, վողջունել, բայց չը և կը մասնիկներով արտասանում ենք օ, և չեղաւ, կողջունէ. իսկ բարբառների մեծ մասի մէջ, երբեմն և զբական լեզուի մէջ, ուրիշ գէպքերում ևս բառասկզբում ո և և ձայնաւորներից առաջ վ և լ չի աւելանում:

Ինչքան էլ վերեւում զրւած մասնակի փոփոխութիւնները հնարաւոր են, բայց և այնպէս իթէ պէտք է մեր ուզգագրութեան մէջ բարեկիսում մտցնել, դա պէտք է այնպէս անել, որ, ըստ կարելւոյն, բացառութիւններ չմնան. այսինքն ընդունել և զործագրել վերեւում զրուած բոլոր առաջարկութիւնները. Մեր զբագէտների և մասնաւանդ ուզիդ զրուների թիւն այնքան փոքր է, որ նրանք, յանուն ապագայ սերնդի ընդհանուր զբագիտութեան և ուզգագրութեան ուսումը դիւրացնելու, պէտք է մի նոր դժւարութիւն էլ յանձն առնեն փոփոխուած ուզգագրութեամբ կարգալու և զրելու, որին նրանք հեշտ կը վարժուեն, իթէ միայն կամնան: Այդ գէպքում նոր սերունդը, որ վարժուած կը լինի ո և և տառերը օ և և արտասանելու, հետեւելով իր արտասանութեանը, յաճախ, մասնաւանդ գաւառական բառերը, կը զրէ՝ ոլորել, հկար, ոլորան, ողորմակոթ, ոչով, երկուհոգիս և կարտասանէ՝ էկար, օլորել, օլորան, օղորմակոթ, օչով, էրկուհոգիս, որ կարելի է սխալ չհամարել, ոչ այն պատճառով միայն, որ դա զրութեան հին ձեն է, այլ աւելի նրա համար, որ այժմ էլ զրում ենք՝ չոլորել, չեկար. Ուրիշ խօսքով այս կարգի բառերի սկզբից

աւելացած կ և յ հնչիւները, որ այժմ էլ յաճախ զուրս են ընկնում կամ չեն աւելանում, կարելի է թոյլ տալ և զրել և չգրել, նայելով թէ ինչպէս են արտասանուում այդ բառերը՝ եկար (=էկար), թէ յեկար, ոլորել (=օլորել) թէ վոլորել, մինչև որ մի վերջնական հաստատուն բնաւորութիւն կը ստանայ գրանց արտասանութիւնը: Այսպիսի մի կրկին գրութեամբ միաժամանակ գործադրուած կը լինի և հին դրադէաներին անելիք մինիմալ զիջումը:

Նոյն ձևով միանալ և նմ. կարելի է թոյլ տալ զրել՝ միյանալ, երբ երեք վանկ են արտասանուում՝ միանալ, երբ երկու վանկ են արտասանուում. բայց այս այսպէս միայն ստանաւորի մէջ, ինչպէս և յ ձայնաւորը ստանաւորի միջ սովորաբար գրում է, երբ չի սղուում:

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Պահելով բառակղզի ո=վո, ե=յի, օ, և (թացի ևմ թայից) զրութիւնները, նոյնպէս և եաւ, իո, իւ երկրաբրաները. (տե՛ս եր. 20—21):

«Այն օրը դարնուրելի անցքեր անցան Հ . . . զիւղի զլիսով օրը ցերեկով քնեց այդ զիւղը, ընդ միշտ քնեց, այնպիսի ժամանակ եր: Վրա հասավ զիշերը, զարմանալի և, թէ ինչու մռայլ են լինում մեծ ոճիրներին հաջորդող զիշերները: Այսոր առանձնապէս թանձր եր խավարը: Հոգեմաշ ամայութեան վրա իշխում եր «մեծ լուսութիւնը», որ միշտ զարմանալի անցքերի պատմութիւն զիտեն և հայտնի չե, թէ ինչու և ում համար և պահում: Ժամանակի հետ համբութեան դաշն են կռում և զլորվում զեպի հավիտենականութիւն: Բանիք քանի անցքեր մեր երկնքի տակ այսպես անցել են, զնացել:»

«Գիւղական եկեղեցու կիսախավարի մեջ ինկի ձուխը բարձրանում եր այն երեկո և բակ կապում փոքրիկ լուսամուտների շուրջը՝ կանթեղի աղոս լույսի առաջ քահանան քաղում եր աղոթքները և բազմաթիվ ժամավորները, մերթ զետնատարած խոնավ խսիրների վրա, մերթ ոտքի կանգնած ու բազկատարած մրձնում եյին, մի ընդհանուր ու խուլ մռմոց հանելով:»

(ԱՀԱՐՈՒՆԵԱՆ)

### ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Պահելով բառակղզի ո=վո, ե=յի, զրութիւնները և եաւ, իո, իւ երկրաբրաները (տե՛ս եր. 21):

Երկու ճատածներն էլ ամբողջապէս նոյն են մեռում, ինչ որ առաջին օրինակի մէջ, միայն երկու անդամ գործածւած «օրը» բառը փոխում է «օրը» գրութեան:

Աշու  
568

## ԵՐԻԱՐԴԻ ՕՐԻՆԱԿ

Պահելով միայն բառակազրի ուղիղ, իւլիս պրունիները (եր. 22):

«Այս որը զարհուրելի անցքեր անցան Հ . . . զյուղի զլիսով։  
Որը ցերեկով քննեց այդ զյուղը, ընդ միշտ քննեց. այնպիսի ժամանակ երև Վրա հասավ զիշերը. զարմանալի է, թէ ինչու մասյլ են լինում մեծ ոճիրներին հաջորդող զիշերները։ Այսոր առանձնապես թանձր եր խափարը Հոգհմաշ ամայության վրա իշխում եր ևմեծ լուսնիթյունը, որ միշտ զարմանալի անցքերի պատճություն գիտե և հայտնի չե, թէ ինչու և ում համար և պահում։ Ժամանակի հետ համրության դաշն են կուում և զլորվում զեզի հավիտենականություն։ Թանի քանի անցքեր մեր երկնքի տակ աշխատ անցել են, զնացել։»

«Դյուղական յեկեղեցու կիսախավարի մեջ խնկի ծուխը բարձրանում եր այն երեկո և բակ կապում փոքրիկ լուսամուտների շուրջը։ Կանթեղի աղոտ լույսի առաջ քահանան քաղում եր աղոթքները և բազմաթիվ ժամավորները, մերթ զեանատարած խոնավ խսիրների վրա, մերթ ոտքի կանգնած ու բազկատարած մրմթջում եյին մի ընդհանուր ու խուլ մռմռոց հանելով։»

## ԶՈՐՈԱՐԴԻ ՕՐԻՆԱԿ

Բոլոր առաջարկ առ բարեփսխումներով։


«Այս որը զարհուրելի անցքեր անցան Հ . . . զյուղի զլիսով։  
Որը ցերեկով քննեց այդ զյուղը, ընդ միշտ քննեց. այնպիսի ժամանակ երև Վրա հասավ զիշերը. զարմանալի յի, թէ ինչու մասյլ են լինում մեծ զոհիրներին հաջորդող զիշերները։ Այսոր առանձնապես թանձր եր խափարը Հոգհմաշ ամայության վրա իշխում եր ևմեծ լուսնիթյունը, վոր միշտ զարմանալի անցքերի պատճություն զիտե և հայտնի չե, թէ ինչու և ում համար և պահում։ Ժամանակի հետ համրության դաշն են կուում և զլորվում զեզի հավիտենականություն։ Թանի քանի անցքեր մեր յերկնքի տակ այսպես անցել են, զնացել։»

«Դյուղական յեկեղեցու կիսախավարի մեջ խնկի ծուխը բարձրանում եր այն յերեկո և բակ կապում փոքրիկ լուսամուտների շուրջը։ Կանթեղի աղոտ լույսի առաջ քահանա քաղոթքները և բազմաթիվ ժամավորները, մի խոնավ խսիրների վրա, մերթ մոտքի կանգնած մրմթջում եյին մի ընդհանուր ու խուլ մռմռոց

ԳԱԱ ԳՈՅՆԱՐԱՐ ԳԻՒՆ ԳԻԱՐ



FL0081242



ԱՀԱՐԹԻՑԱՑ